

ԳՐԱԾԻՍՄԻՐ

ԲԱՆԴԻՏՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ

Նկարազարդ պատմվածքներ

ՅԳԻ. ԳԳ
Գ-87.

ՀԱՅԿ. ՀՐԱԶ. ԴԻՂ. ՔԱՂԲԱԺՆԻ ԽՄԸ.—ՀՐԱՏ. ՄԱՍ

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ.

1929 թ.

891.99

9-87

ԳՐԱՄԻՍՄԻՐ

01 JAN 2009

19 NOV 2011

ԲԱՆԴԻՏՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ

Նկարագրող պատկերներ

—•••••—



ՀԱՅԿ. ՀՐԱՁ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ԽՄԲ.—ՀՐԱՏ. ՄԱՍ

ՂԱՐԱՔԻՆԻՍԱ.

1929 թ.

10.04.2013

25797/2

В РУКАХ БАНДИТОВ

Разказы

ГРАМИСМН

Լարաբեիխայի Քաղխորհրդի Տեղանտ.
Բաժնի Տպարան

ԳՐԱՌԵՊԱՎԱՐ № 2141 (Բ)

ՊԱՏՎԵՐ № 420

ՏԻՐԱԺ 2000

37075-62

ԲԱՆԴԻՏՆԵՐԻ ԶԵՌՔՈՒՄ

Յերեկոյան հանգստի ժամին դասակի հրամատարի շուրջը լինանկյունում հավաքվել են մի խումբ կարմիր բանակայիններ և խոսում են կայազորային կանոնադրքից:

— Ո՞վ ինձ կասի, — դիմեց դասակի հրամատարը կարմիր բանակայիններին, — թե ինչու յե ժամապահին արգելվում պոստում նստել, քնել, ուտել, խմել, ծխել, յերգել...

Յեվ բանակայինները մի առ մի քննում են այն հետեանքները, վոր կարող են տեղի ունենալ, յեթե ժամապահը պոստում ուտի, խմի քնի և այլն:

Բանակայիններն ուշի— ուշով լսում են դասակի հրամատարի բացատրությունները, իրենք մասնակցում են մտքերի փոխանակությանը, աստիճանաբար գիտակցում կայազորային ծառայության լրջությունը:

Համոն ել եր յերբեմն մասնակցում խոսակցությանը, բայց իր սրտի խորքում նա, կարծես թե, այնքան ել համոզված չեր դրանում: Սակայն դասակի հրամատարի ասածները, նրա բերած որինակաները խորապես ազդում են Համոյի վրա: Նա այդ որվա դասի մասին չի դաշարում մտածել նույնիսկ գիշերը, անկողնում, քնելուց առաջ:

* *

— Համո, վեր, այսօր դու նշանակված ես
ժամապահ հրետանական պահեստի մոտ:

Համոն ցատկեց տեղից ու հրացան առած
վազեց կարգում:

Հրետանական պահեստը, վորտեղ ժամա-
պահ է կանգնել այսօր Համոն, գտնվում է փոք-
րիկ անտառակի մոտ, գորանոցից բավական
հեռու:

Մութ գիշեր է: Համոյին թվում է, թե
անտառի խորքից նրա ականջին հասնում է
գայլերի վոռնոցը: Բայց Համոն վախկոտ չէ:
Նա լավ գիտե, վոր ինքը մենակ չէ, վոր մի
քսան քայլի վրա գտնվում է պահակատունը,
վոր ընկերները պատրաստ են յուրաքանչյուր
րոպե ոգնության հասնելու նրան: Յեվ նա աչ-
քերը չորս արած, նայում է մթությանը և հրա-
ցանն ամուրսեղմած իր ձեռքում հսկում է պոս-
տը: Սակայն կամաց—կամաց նա մտքով հեռա-
ցավ պոստից շատ հեռու, դեպի իրենց գյուղը,
իր ընտանիքը, իր սիրուն Մարանը: Յեվ Հա-
մոն չնկատեց՝ ինչպես փակվեցին նրա աչքերը:

* *

— Յավաշ, առանց աղմուկի վերցնենք
ժամապահին, և հետո մենք մեր բանը կտեսնենք:


Այս խոսքերը, — թեև սրանք արտասան-
ված եյին շատ ցածր ձայնով, — հասավ Համոյի
ականջին: Մի ականթարթում նա սթափվեց ու
նայեց չորս կողմը: Անտառի մոտից դեպի
պոստն եյին գալիս մի քանի սովերներ...

— Ո՞վ ես, կաց, թե չե կրակում եմ... —

գոչեց Համոն:

Սակայն նախազգուշացումը բանդիտներին
վրա հակառակ ազդեցությունը գործեց: Նրանք
փոխանակ կանգ առնելու՝ սկսեցին վազքով մո-
տենալ Համոյին:

Համոն շփոթվեց. նա վայրկյանապես ծուռնկ



Անմիջապես կապուցեցին նրա ձեռքերը և բերանը խցանե-
ցին թաշկինակով...

Իջավ, ուսին սեղմեց հրացանը և... Հրացանը չի
արձակում: Հրացանն անսարքին է: Գնդակը
հանելու և կրկին լցնելու ժամանակ չկա:

— Բայց, ինչ ել լինի, եթան չեմ ծախի
լիմ կյանքը, — մտածեց Համոն և հրացանը ձգած

պատրաստվում եր սվինով ընդունելու իր անկող-
հյուրերին, հույս ունենալով, վոր մինչև այդ
ոգնության կհասնի պահակը:

Կայծակի արագությամբ բանդիտները վրա
տվեցին, նրանցից մեկին հաջողվեց անմիջապես
բռնել սվինից և այդպիսով զրկել Համոյին
պաշտպանության վերջին միջոցից: Սակայն նա
վերջին անգամ լարեց իր բոլոր ուժերը և հրա-
ցանի կոթով մի այնպիսի հարված հասցրեց
բանդիտներից մեկի գլխին, վոր նա վայր ըն-
կավ գետնին: Միևնույն ժամանակ Համոն մի
սրտաճմլիկ ձայն արձակեց, ոգնության կանչե-
լով իր ընկերներին:

Բայց կովի համար ուժերը չափազանց ան-
հավասար եյին: Վայրկյանապես նրա ձեռքից
խլված եր հրացանը. անմիջապես կապոտեցին
նրա ձեռքերը և բերանը խցանեցին թաշկինա-
կով, վորպեսպի նա այլևս չկարողանա կրկնել իր
ոգնության կանչը:

— Դեհ, դուք սրան տարեք անտառի խոր-
քը և այնտեղ նրա հաշիվները վերջացրեք, իսկ
մենք կմաքրենք պահեստը, — ասաց կամաց բան-
դիտներից մեկը, ըստ յերևույթին, նրանց ա-
վագը:

Համոյին քարշ տվին անտառ: Նա հուսա-
հատական ճիգ եր գործ դնում ազատվելու բան-
դիտների ձեռքից, կամ գոնե բերանն ազատե-
լու և կրկին ոգնության կանչելու: Բայց շատ
պինդ եյին բռնել բանդիտները և հնար չկար ա-
զատվելու նրանց ճանկերից:

Հանկարծ նրա ականջին պահեստի մոտից
հասան հրացանի տրաքոցներ:

Համոն ցնցվեց: Նա անմիջապես հասկացավ
վոր պահակն և յեկել իր կանչին:

— Պահեստն ազատված ե. յես կատարեցի
իմ պարտքը, յես այժմ կարող եմ հանգիստ
մեռնել. — անցավ Համոյի մտքով և նրա սիրտը
լցվեց ուրախությամբ:



Արագ սկսեցին Համոյին քարշ տալ դեպի անտառի խորքը

Բանդիտները նույնպես լսել եյին տրա-
քոցների ձայնը: Նրանք մի րոպե շփվեցին:
Բայց անմիջապես զգաստացան և ավելի արագ
սկսեցին քարշ տալ Համոյին դեպի անտառի
խորքը: Համոյին ըներին անտառի խորքը, ամուր
կապեցին մի ծառից, և մի քանի բանդիտներ,

գիմացը կանգնելով, կրակի պատրաստ վերցրին հրացանները:

— Տրախկ... վերջին անգամ զգաց Համոն ու սարսափից ուժեղ ցնցվեց:

* *

— Տո՛ւ, վեր կաց ե՛, ինչ յեղավ քեզ, այսօր քան ամուր քնել կլինի՞...

Համոն քափ ու քրտինքի մեջ կորած, աչքերը չուած վաշտի որավորակին եր նայում: Շատ դժվարությամբ միայն նա գլխի ընկավ, վոր իր դժվար կացությունը նա յերազույն եր տեսել: Նա ազատ շունչ քաշեց:

— Պոստանում եմ այսուհետև միշտ ել սարքին պահել հրացանս և յերբեք պոստում չքնել:

«Չ Ա Ր Ք Ե Ր Ը»

Կարմիր բանակայինները հագնում էին նոր ստացած կոշիկները: Սարգիսը չափազանց գոհ եր իր ստացածով, թեև կոշիկներն անչափ մեծ էին նրա վոտքերին: Նրան թվում եր, թե նրա կոշիկներն առանձնապես լավ են կարված, և կաշին ել ավելի լավ ե:

— Սարգիս, իմ կոշիկները փոքր են, վոտքիս չեն գալիս, քոնն ել շատ մեծ են, յեկ փոխենք,—ասաց նրան ընկերներից մեկը:

— Ինչ կխաբեմ... գիժ եմ, վոր յես իմ կոշիկները տամ, քոնը վերցնեմ:

Սարգիսը հիանում եր իր կոշիկներով. ինչ հոգ, վոր նրանցից ամեն մեկի մեջ ազատ

վարող էին յերկու վոտն ել տեղավորվել: Նրա ուրախությանը չափ չկար:

— Սարգիս,—կանչեց ավագը,—այսօր դու նշանակվել ես պահակ: Ժամապահ կկանգնես վոտորի պահեստի մոտ:

— Լսում եմ, ընկեր ավագ,—պատասխանեց Սարգիսը կոտրած ձայնով:

Առաջին անգամը չեր, վոր Սարգիսը պահակ եր նշանակվում. սակայն նրան միշտ հաջողվում եր ընկնել «լավ» պոստեր. գնդի շտաբում, զրամարկղի մոտ, որավորակ խոհանոցում, արհուրում, ել վո՛ր մեկն ասեմ. դե, ինքներդ գիտեք, թե պոստը պոստի վրա անագին տարբերություն ունի: Դեհ հիմա արի ու վառողի պահեստի պոստը համեմատիր շտաբի զրամարկղի պոստի հետ. խոսքը են չի մենակ, վոր շտաբում տաք ե, ուզենաս մի քիչ ել կնստես: Զե Սարգիսը վոչ նստելու մասին եր մտածում, վոչ ել քամուց, ցրտից, անձրևից վախենում: Հին բանակային եր Սարգիսը և լավ բանակային. բայց, բայց... հաշիվ շատ կար: Ինչ թագցնեմ, Սարգիսը դեռ գյուղում վախկոտ տղա յեր համարվում: Բավական եր, վոր արեւը մայր մըտներ և մութն ընկներ, Սարգիսը տուն կշտապեր և այսուհետև վոչ մի բանով չեր կարելի հրապուրել նրան և փողոց դուրս բերել:

Զինվորական ծառայության մեջ շատ բան շտկվեց նրա բնավորության մեջ, ծառայությունը նրա սրտից չվերացրեց մանկությունից արմատացած վախը:

Դեռ պահակատանը Սարգսի լեղին ճաքում
եր, յերբ հիշում եր, վոր գիշերով ել պետք
պոստում կանգնի:

Բայց ահա հասավ նրա հերթը:

— Յա բախտ, անփորձ պրծնեմ ես անգամ
ել աշխարհում դարդ չեմ ունենա. — մտածեց
Սարգսիսը յերկչոտ քայլերով հետևելով պա-



Հանկարծ նա լսեց մի ինչ-վոր ձայն...


հազրին: Բոպենները նրան տարի ելին
թվում: Յերևակայութունը մեկը մյուսից սուս-
կալի պատկերներ եր նկարում:

Հանկարծ նա լսեց մի ինչ-վոր ձայն և նկա-
տեց մեկի սողացող ստվերը:

— Վայ ինձ, յես կորած եմ... — շշնջաց Սար-
գսիսը: Վախից խենթացած, նա մոռացավ ամեն
ինչ, լեզուն ընկեց, նա չկարողացավ ձայն

տալ, մոռացավ սուլիչի նույնպես հրացանի մա-
սին: Պոստը թողեց, լեղապատառ պահակատունը
վազեց:

Սարգսիսը պետք ե վազեր անձրևից գոյա-
ցած խոր ցեխերի միջով: Հանկարծ նա զգաց,
վոր մեկը նրա վտից քաշում ե:



Պոստը թողեց, լեղապատառ պահակատունը վազեց...

Հավաքելով իր վերջին ուժերը, Սար-
գսիսը դուրս պրծավ և մի քանի բոպե անց պա-
հակատանն եր: Տեսնելով Սարգսի ալլալված
դեմքը, ամբողջ պահակը սաստիկ անհանգստա-
ցավ: Պահակապետն անմիջապես հավաքեց պա-

հակը և շարժվեց դեպի պոստը: Պոստում ամեն-
ինչ հանգիստ եր, կողպենքներն ու կնիքներն
անմխաս, հարձակման վոչ մի նշան չկար:

Պոստի մոտերքում պահակապետն ինչ-վոր
ձայն լսեց: Գնաց այն կողմը և տեսավ. . . մի
շուն, վորը հանգիստ վոսկոր եր կրծում: Հենց
այդ շունն եր, վոր այնպես սարսափեցրել ու
պոստից փախցրել եր Սարգսին: Պահակապետը
մի նոր ժամապահ կարգելով, պահակատուն վե-
րադարձավ: Այնտեղ սարսափից մի անկյունում
կուչ եր յեկել Սարգիսը:

— Դեհ, Սարգիս, զեկուցիր, թե ինչ և պա-
տահել պոստում:

Ուշքի գալով, Սարգիսը պատմեց, վոր նա
տեսավ, ինչպես մի մեծ, սև սովեր և սողում-
հետո հարձակվել են նրա վրա և չեն թողել, վոր
ուշքի գա:

— Յես հաղիվ-հաղ ազատվեցի նրանց ձեռ-
քից, — վերջացրեց իր պատմութունը Սարգիսը:

Այստեղ միայն պահակապետը նկատեց, վոր
Սարգիսը վոտաբոբիկ և:


— Իսկ ուր են կոշիկներդ:

Սարգիսը նույնպես ապշած նայեց վոտնե-
րին և առջին անգամ նկատեց, վոր կոշիկները
հագին չեն:

— Այդ անպատճառ չարքերի գործն և, թե
չե ինչպես կարող եյին վոտներիցս անհետա-
նալ կոշիկներս:

Ամբողջ պահակը տարակուսանքի մեջ եր.

վոչ մի կերպ չեյին կարողանում բացատրել այդ
տարօրինակ յերևույթը:



— Այդ անպատճառ չարքերի գործն և...

Լույսը բացվեց: Ժամապահը նայեց իր շուր-
ջը և նկատեց ցեխի մեջ ցցված մի դույզ կոշիկ:

ԱՒՐ, ԶԱՉԵՄ Ե...

— Ափո ջան, աչքդ լուս... վերցրին ինձ.
Սաքոյենց Համբոյի չափը չեկավ. խեղճն ինչքան
աղաչեց չեկավ: Մեր գեղից մենակ վեց հոգի
յենք, — ասաց Գեոն, ուրախ-ուրախ մտնելով ի-
րանց բակը:

— Լուսի կենաս, մատաղ... գնաս, ջան սա-

դուրթյամբ ծառայես, — ձայն տվեց հայրը, վոր նոր եր վերադարձել հանդից և կարտոֆիլի մեշոկներն եր իջեցնում սայլի վրայից:

— Վոտքդ քարի չառնի, դուրբան, ուրախ գնաս, ուրախ յետ գաս, — ասաց Գևոյի մայրը, գոգնոցի ծայրով թափուն սրբելով աչքերը:

— Այ ջանմ, — շարունակեց Գևոն, — կայնել բոյս են չափում, դոշս են թըխկթըխկացնում, ասըմ են, միթամ, տենանք ցավոտ չէս: Բաս, ասըմ եմ, աղբրի են դուլալ ջրեր խմողը, սաքերի են անուշ հովը շնչողը, ցավոտ կլինի: Վերջը շատ գես տվին, դեն տվին, մի չոռ ելա չգտան: Եստեղ ստարշի բժիշկն ասըմա, — հալալ ա քու ծառայությունը, երկաթի նման, ասըմա, սիրտ ու թոք ունես, եղպեններն ա, վոր պետք ա հենց ծառայեն մեր բանակում:

— Դոչադ ըլնես, Գևո ջան, — ձայն տվեց հորեղբայրը, — նամուսով ծառայես, մեզ սևերես ջանես:

— Արխային կաց, բիձա ջան, հիմա ծառայությունը հո քու տեսած վախտվանը չի: Համել, դե, հիվ չիմանում, վոր հիմիկվա ծառայությունը ուղղականի հետ մեկտեղ խելք ու շնորհք ել ա սովորեցնում, անգրագետին գիրուղալամ ա տալիս, անհասկացողին հասկացնում ա...

— Հա, Գևո ջան, հա, են մեր ժամանակն եր, վոր անիծված եր: Սալգաթ ընկնողի տունը, հեռի հարկից, մեռելատան եր նմանում: Ծնողներն ու բարեկամները, դուռ ու դրկեց ենպիսի

մի սուգ ու շիվան եյին բարձրացնում, վոր անցնողի զլխին հող եր մազվում, — ասաց հարևան Գոթորը, վորն ինքն ել եր տեսել հին բանակի լաղաթը:

Մինչ այդ, լսելով Գևոյի ընդունվելու լուրը, նրանց տան դռան արդեն բավականաչափ մարդիկ եյին հավաքվել ազգականներից, ծանոթներից ու հարևաններից:

— Գոթո ապեր, հալա մի պատմիր, տենանք ձեր վախտը վճնց եր, — ասաց յերիտասարդներից մեկը:

Գոթորը վառեց չիբուխը, ուղղելով գլխի մոթալ-փափախը ու ապա դիմեց չահեկներին:

— Պատմեմ, տղերք ջան, պատմեմ:

Գնան ու ել յետ չգան են ժամանակները: Սալգաթություն մի ասա, մի կրակ ու պատիժ ասա. մարդու հոգի եյին հանում: Կաշիներս քերթում, թողնում:

Հինգ ջան հայ եյինք, ընդել եյինք ուսնորի մեջ, եհ ինչ գիտամ, քանի հազար վերստ եստեղից Ռուսաստանի խորքերն եյին տարել: Վոչ լեզու եյինք հասկանում, վոչ ել մի բան գլխի ընկնում:

Հեյվանի պես աչքներս պլշած մեր հնգերներին եյինք մտիկ տալիս, ինչ նրանք անում եյին, մենք ել են եյինք անում: Լավ տղերք եյին մեր ռուս հնգերները. նրանք ել հեռու տեղերից հավաքված քյասիբ-քյուսուբի տղերք եյին. բայց ոգճւտն ինչ, վոր իրար լեզու չեյինք

իմանում: Լալ ոյինի եյինք խաղում վոտքով,
ձեռքով իրար բան հասկացնում:

— Բայց հետո լեզուն սովորեցիք, ելլե՞,—
հետաքրքրվեց լսողներին մեկը:

— Սովորելը սովորեցինք, համա վայ են
սովորելուն:



— Ախր, դաչեմ, ե...

Մֆթա, վոր ուսերեն խոսքերը միտս են
մնացել, եդ ուշունցն եր; չունքի մեր թեկանի-
ներն ել, ֆելդֆերիլներն ել, կամանդիրներն ել
առավոտ—իրիկուն մի գլուխ ուշունց ե, վոր
տալիս եյին մեզ:

Մի անգամ ել եդ շան վորդի ֆելդֆերիլը,

չեմ իմանում՝ ի՞նչ եր ուզում ինձանից, վրլվը-
լացրեց, վրլվըլացրեց, հետո ել սկսեց բորբոռալ
վրես: Փետի պես սառել, ցցվել եյի առաջին, աչ-
քերս չեյի թեքում աչքերիցը, համա մի խոսք ե-
լա չեյի հասկանում: Մեկ ել եդ անխիղճ, անի-
րավը տարավ ու բերեց, ենպես մի սիլլա հա-
ցըրեց, վոր ականջներս տոժացին, աչքերս պե-
ծին-պեծին տվեցին: Ել չգիմացա, ասացի.

— Ախր, դաչեմ, ե...

Ես ասելն եր. վոտքերը գետին տվեց, փըր-
փուրը բերանին կատաղած շան նման դուրս ե-
կավ կազարմից: Գնացել եր ոտսնուն թուղթ
եր գրել, թե միթամ յես չեմ ուզում ծառայել,
թե միթամ նրա հրամանը չեմ կատարում, թե
խոսք եմ յետ դարձնում նրան ու ել ի՞նչ գի-
տամ, հազար ու մի սուտ եր ավելացրել, վոր
ինձ գլխով վոտքով կորցնել տա: Ասում եյին,
թե ինձ սուղի պիտի տան, համա լավ եր, եդ
անգամ լավ պըծա, իրեք շաբաթ ծակը կոխեցին
ու հետո բաց թողին:

— Սովորե՞լը վոնց եր, Գոքոր ապեր, ի՞նչ
եյին սովորեցնում բա ձեզ:

— Սկի ինչ. ենա բացի «ոազ, գվա»-ից,
նստում եյինք և ամիսներով «ուստավ» եյինք
սովորում:

Քնած տեղիցս ել, վոր զարթեցնեյիր,
անգիր կարող եյի յերեսներ եդ ուստավներիցը
մի շնչի ասել: Իսկ թե ասածիս միտքը հարցը-
նեյիր, մի խոսք ելա չգիտեյի:

— Բայց են հայ հնդերներդ, նրանք վոնց
եյին:

— Չորս հնդերներինցս մեկը ուսումով եր, «գարագսկոյ» եր վերջացրել. նա մի քանի ամսից հետո պիտեւ մտավ ու լավ տեղավորվեց: Մեկը Նավոյի տղա խեղճ Ստեփանն էր, նրան հո, ճանաչում եք. մախորկի ջուր եր խմել, հիվանդացել. ազատվեց եկավ տուն, մի քանի ամիս չբաշեց, մեռավ: Մեկն էլ մի տարի ծառայեց ու մտավ աֆրիցերներինց մեկի մոտ դենշչիկ, ինձ էլ եր համոզում, համա նամուսս չվերցրեց: Յես նրան ասեցի, վոր տասը տարի կծառայեմ, սրանից ավելի նեղութուն կքաշեմ, համա դենշչիկ չեմ մտնի:

Իսկ են մեկ հնգերս էլ մի ղոչաղ տղա եր. իսկական տղամարդ եր՝ բոյով, բուսաթով: Երկու տարի դիմացավ. երկու տարի հալալությամբ ղուլուղ արավ: Մի կոպիտ խոսք եր լսում, մի ուշունց եր ստանում, կուլ եր տալիս, ատամները կրճտացնելով: Վերջը մի գիշեր էլ հրացանն առավ ու փախավ պոլկիցը: Ել նրան չտեսա: Համա հետո նրանց գեղականները ասում էին, վոր ղաչաղ եր դառել, սար ու ձոր ընկել:

Գոքորի պատմածը ծանր տպավորութուն եր թողել բոլորի վրա:

— Հաստատ ընի մեր իշխանությունը, — ընդհատեց լուսթյունը բիճա Մարգարը, — իրա դրած կարգ ու կանոնը: Հաստատ մնա մեր Կարմիր բանակը, վոր մեր ջահելների համար մի դպրոց ա: Աչքներիս առաջին ա, քանի-քանիսն են յետ դառել: Հրես հենց մեկը Մանուկի Ղաղարի տղեն. հով կասի, վոր նա են սարի

չորանն ա, անցած որը ժողովումը մի ճառում եր, վոր կասես համալսարան ա գնացել: Գեղականների բերանը բաց եր մնացել:

Գնա, Գևո ջան, գնա, բանակում սովորիր, վոր պետք յեղած վախտը կարողանաս զենքը ձեռքիդ պաշտպանել մեր իշխանությունը, չթողնես վոր յետ գան են հին սև որերը:

ՔԵՌՈՒ ՏՂԱ

Մի խումբ նորեկ կարմիր բանակայիններ, մինչև վոր կսկսվեր հաջորդ որվա տոնի առթիվ հուշերի յերեկոն, կատակներ էյին անում հին կարմիր բանակային Թաթոսի հետ: Սա սովորություն ուներ բոլորին վախեցնել «գաուպտ-վախտով»:

— Իսկ դու յերբեք նստել ես գաուպտ-վախտում, — հարցրեց ջահելներից մեկը:

— Խոստովանանք լինի. մի հինգ որ նըստել եմ:

— Վհնց, Թաթոս ջան, հլա մի պատմիր, տեսնենք, ինչի՞ համար ես նստել, — հարցրին ջահելները:

— Դե ուղ ըլեք գլխիցս, արժի՞ արդյոք հիշել դրա մասին:

Բայց ջահելները ձեռք չէին քաշում: Թաթոսի ճարը կտրվեց ու նա սկսեց իր պատմությունը:

— Անցյալ տարին եր. յես զեռ նորեկ կարմիր բանակային էյի: Չեմ կարող ասել, վոր ծառայությունն ինձ դժվար եր թվում: Ամեն

ինչ շատ շնորքին եր գնում, թե շարքում, թե քաղաքագիտությունում, թե ընդհանրապես ծառայության մեջ ընկերներիցս յետ չեյի մնում: Մենակ թե եղ վերակարգերը չեյի սիրում: Ինչ վոր ճիշտ ե, ճիշտ ե: Յես շատ լավ եյի հասկանում, վոր վերակարգում պետք ե շատ ուշադիր լինել, գիտել, վոր ժամապահ յեղած ժամանակ չի կարելի քնել, բայց հենց թարսի պես եղ անտեր քունս տանում եր հենց այն ժամանակ, յերբ վերակարգումն եյի լինում: Գյուղում պատահել ա, վոր յերեք գիշեր անդադար չեմ քնել և վոչինչ: Գիտից վոր գիշերով սելերով քաղաք եյինք գալիս, սաղ ճամփին ընկերներս սելերի մեջ ընկած խռմփացնում եյին, համա յես, հեշգրինգ տեղ եյի հասնում, սաղ որը քաղաքում դես ու դեն վազվզում ու յետ գնում գիշերով: Թե դու աչքդ կպցնում եյիր, յես ել ենպես: Կամ թե պատահում եր գիշերները քեֆերում եյինք լուսացնում, պարում սրտիդ ուզածին չափ, ում մտքով կանցներ, գլուխը բարձին դնելը: Համա եղ վերակարգերում, գլուխս ծանրանում եր, աչքերս ինքն իրեն փակվում, մըտքերս տանում եյին հեռու—հեռու: Մեկ ել տեսար ինձ քաղցր քնից դարթեցնում եր գնդի որսպահը, պահակապետը կամ վաշտի հրամարտար: Յես վոր ծառայությանս համար վոչ մի թթու խոսք չեյի լսել իմ պետերից, մի քանի անգամ նկատողություն եյի ստացել վերակարգում քնելու համար:

Մի որ ել,—սե լինիր եղ որը,—ինձ որա-

վորակ (գնեալնի) նշանակեցին ախոռում: Դրանից մի որ առաջ գեղից նամակ եյի ստացել:

Հայրս գրում եր, վոր քիռուս տղան Յերեվան ե գալու և ինձ համար բան-ման ե բերելու:

— Համա թե լազաթ կտա, համ յես կլիանամ, համ ընկերներին մի լավ կհյուրասիրեմ:

Եսպես մտքեր եյի անում, սպասելով քեռու տղին, յերբ վերակարգի գնացի:

Կարգման ժամանակ գնդի հերթապահը ստուգեց վերակարգում գտվողներին, իմանալու հանար, թե գիտե՞ն արդյոք իրենց պարտականությունները: Հերթն ինձ հասավ: Հերթապահն ինձ եսպես մի հարց տվեց.

— Ի՞նչ կանես. յերբ տեսնես, վոր ձիերն ախոռում կւվում են:

Դեհ, տված հարցն ենպես մի հարց եր, վոր ձեզանից ամեն մեկը կարող ե առանց կանոնադրի պատասխանել:


— Իսկույն կրածանեմ ձիերին և իրենց տեղը կտանեմ,—համարձակ պատասխանեցի յես:

Իմ վստահությունս ազդեց: Հերթապահը յերևի վճռեց, վոր յես լավ գիտեմ ներքին ծառայության կանոնադիրքը և մյուս ընկերներու սկսեց քննել:

Յես սկզբում նշանակվել եյի առաջին փոխորդի մեջ: Բայց չգիտելի այդ փոխորդի կարգ ու կանոնը, միայն թե թվում եր, վոր յերբորդ փոխորդն ամենահանգիստն ե.

— Սաղ գիշերն է ընկնում, ելի,— մտածում էյի ինքս ինձ,— խոտի վրա հանգիստ պառկիր ու քնիր քեզ համար, ինչ գնեալնություն, ինչ բան։ Զիբերին մտիկ անելս վճռն ե։

Մի քանի ֆանդրազությունով ընկա յերբորդ փոխորդը։ Շատ էյի ուրախ, վոր բանս հապիս գրստեցի։ Յերբ հերթը հասավ ինձ. գիշերը ժամի մեկին անցա հերթապահությանս։



— Պառկելս ու քաղցր քնի մեջ ընկնելս մեկ յեղավ...

Ախոռում ամեն ինչ հանգիստ եր, ձիերն իրենց համար խոտ էյին ուտում և անհանգստության վոչ մի նշան ցույց չէյին տալիս։

Անուշ քնի լավ ժամանակն եր։

Ախոռում մի քանի անգամ անց ու դարձ անելուց հետո յես ձիերի մսուրներից կակուղ խոտ վերցրի, ախոռի ծայրում հանգիստ տեղ

պատրաստեցի, և տնից ստանալիք բաների մասին մտածելով. պառկեցի հանգստանալու։

Պառկելս ու քաղցր քնի մեջ մտնելս մեկ յեղավ։

Մեկ ել քնիս մեջ լսեցի՝ ինչպես ախոռում աղմուկ բարձրացավ և մեկը «որավորակ, որավորակ» կանչեց։ Տեղիցս վեր թոռա ե, աչքերս տրորելով, հարցրի...

— Եղ ով ա։

— Քո քեռու տղեն Ե, — լսվեց տղամարդու մի զիլ ձայն։

Զարմացած ու հիացած, առանց ինձ հաշիվ տալու, ուրախ—ուրախ դեպի ախոռի դուռը վազեցի։

Բայց յերեակայեցեք իմ սարսափը, յերբ քեռուս տղի փոխարեն իմ առաջ կանգնած եր մեր գնդի հրամաստարը։

Բանից յերևաց, վոր հրամաստարը գիշերով, յերբ գունդը շրջագայելու յեր դուռն յեկել, լսել եր, վոր ախոռում ձիերը կովում են և ներս եր մտել տեսնելու, թե ինչումե ե բանը։ Ինձ քնած եր գտել և վրդովված. դրանից իմ հարցին պատասխանել եր, թե՝ «քո քեռու տղան ե»։

Թաթոսը լոնց և ամոթից ել չկարողացավ շարունակել։

— Իսկ հետո,— վրա տվեցին ջահնները։

— Ել ինչ եք դահլիս տանում։ Հետո ինձ 5 որ գառապտվախտ նստեցրին, և յես սովորեցի որավորակությունը։

— Բա՛ս քե՛տու տղա՛ն, — ձեռք չեյին քաշում նորեկ բանակայինները:

— Քեռուս տղեն յեկել էր, յերբ յիս գառապտվախտումն եյի: Դեհ, ի հարկե, ինձ տեսնել չեր կարող: Բերածը տվել էր ընկերներս, վոր ինձ հանձնեն և ինքը վերադարձել էր գեղը: Համա զե հարամ ըլիւր եղպես բան ստանալ:

Տղերքը պատրաստ եյին զեռ մի շարք հարցեր տալու, բայց Թաթոսին անհարմար դուրսեցնելու փրկեց հուշերի յերեկոն, վորը հենց եղ ըրպեյին բացված հայտարարվեց:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ


Կարոյին գունդը գործուղել էր Բ. քաղաքը: Նա կայարանում հանգիպեց իր համագյուղացի Հրայրին, վորը մեկնում էր ռազմական զբաղոցում սովորելու: Մինչև գնացքի գալը կար մի քանի ժամ: Ընկերները միասին զբոսնում եյին կառամատույցում և խոսում: Ծիշտ կլինե՞ր ասել, վոր Կարոն խոսում էր, իսկ Հրայրը՝ նրան համբերությամբ լսում:

Հրայրին արդեն սկսել էր ձանձրացնել ընկերը. նա ալիս նրան աշխարհի ուշադրությամբ չեր լսում, ինչպես առաջ, և յերբեմն նրա մտքերը շատ հեռու եյին լինում ընկերոջ ասածներից: Այդ նկատել էր նաև Կարոն:

Այդ էր պատճառը, վոր Կարոն բավական ուրախացավ, յերբ նրանց նստարանին մոտեցավ մի անծանոթ և քաղաքավարի բարեկեղուց հետո նստեց նրանց կողքին:

— Ներեցեք, ընկերներ, դուք վոր գնդից եք:

— 2-րդ հրետանական, — մեծ պատրաստակամությամբ վրա բերեց Կարոն. — 1-ին Հրետանական գունդն այս կողմերում չե. նա գտնվում է Ս. քաղաքում: Նույն վայրկյանին Կարոն զգաց, վոր Հրայրը նստարանի յետեից ամուր



— Ներեցեք, ընկերներ, դուք վոր գնդից եք...

քաղեց Կարոյի փեշը: Կարոն իսկույն նայեց Հրայրի աչքերին: Նա մտալ էր, յերեւում էր, ինչպես նա ինչ — վոր բանից դժգոհ է:

— Տարորինակ տղա յե այդ Հրայրը, — ինքն իրեն մտածեց Կարոն, — քաղաքավարի մարդկանց հետ մի կարգին խոսալ չգիտե և զեռ

ուրիշին ել չի թողնում, վոր մի կարգին խոսեն:

Մինչ այդ անծանոթը սիրալիւր ժպիտը դեմքին շարունակեց ընդհատված խոսակցությունը:

— Ուրեմն, այստեղ 2-րդ հրետ գունդն ե կանգնած, այժ, — հարցրեց նա Կարոյին և, ինչպես թված Կարոյին, մի խեթ հայացք ձգեց Հրայրի վրա:

— Այո, — պատասխանեց Կարոն, — բայց չկարծեք, վոր մեր կայապետը բաղկացած ե միայն մեկ հրետանական գնդից: Վոչ, այստեղ կան նաև 1-ին և յերկրորդ հետևակ գնդերը, կապի վաշտը...

Այս անգամ Հրայրն ուժեղ բռնեց ընկերով կողքը:

Կարոն այս անգամ լուրջ նեղացավ իր ընկերովից:

— Ինքը խոզ ե, — մտածեց նա Հրայրի մասին, — և ուզում ե, վոր ուրիշներն ել խոզություն անեն: Հաղիվ-հաղ մի քաղաքավարի մարդ ե պատահել, վորի հետ կարելի չե շնորքին խոսել և նա չի թողնում:

Այս անգամ Կարոն վորոշել եր վրչ մի ուշադրություն չդարձնել ընկերով վրա: Նասկսեց շատ քաղցր խոսակցել անծանոթի հետ: Մի քանի անգամ ել Հրայրը բռնեց նրա կողքը, բայց Կարոն այլևս վոչ մի ուշադրություն չեր դարձնում Հրայրի վրա:

Կարոն արդեն անցել եր իրենց գնդի հրա-

նոթների նկարագրությանը, յերբ հանկարծ Հրայրը վրաքի կանգնեց և դիմեց Կարոյին:

— Կարո, հարկավոր ե տեսնել Սուրենին, նա կարող ե դեռ գնացած չլինի. յես մի բան եմ մոռացել, պետք ե ապսպրեմ նրա հետ:

Սուրենը գնդի սայլապանն եր, վորի հետ Հրայրը յեկել եր կայաբան:

— Ձե, Հրայր, նա արդեն վաղուց գնացած կլինի, — ասաց Կարոն: Բայց յերբ նա նայեց Հրայրին, նրա աչքերում նա այնպիսի հրամայական շեշտ նկատեց, վոր իսկույն վեր կացավ և հետևեց ընկերով:

Անծանոթը մնաց նստած նստարանին և խառամանկ ժպիտով նայում եր հեռացող ընկերների յետևից:

Յերբ ընկերներն արդեն այնքան եյին հեռացել նստարանից, վոր անծանոթն այլևս չեր կարող լսել նրանց ձայնը, Հրայրը դիմեց նրան:


— Տո, շաշ, այդքան շուտ միթե կարելի չե մոռանալ բանակում սովորեցրածը:

— Ի՞նչ սովորեցրած, — շփոթված պատասխանեց Կարոն:

— Չոռը քո պինչ, — բարկացած վրա բերեց Հրայրը, — բաս ռազմական գաղտնիքը: Ո՞վ ե այդ անծանոթը. քանի՞ անգամ ես տեսել, գործ ունեցել նրա հետ: Ի՞նչ գիտես, թե ինչ մարդ ե, գուցե հենց լրտես ե, վորը զիտմամբ թրև ե գալիս այսպիսի տեղերում, վոր քեզ պես հիմարներին վորսի ու նրանցից տեղեկություններ հավաքի Կարմիր բանակի մասին:

Ընկերոջ հանդիմանութիւնը կարոյի վրա աղդեց ուսմբի պայթուանի պես: Նա սկսեց վերհիշել այն ամենը, ինչ պատմել եր անծանոթին և սոսկաց:

— Ինչ, ապուշն եմ յեղել յես, Հրայր,— ասաց նա հուսահատ շեշտով,— ինչո՞ւ յես ուշադրութիւն չդարձրի քո նախազգուշացումներին: Փոխանակ կողքս բռնեի, փեշս քաշելու, դու



— Ինչ ապուշն եմ յեղել յես, Հրայր...

գլուխս պետք ե ջարդելիւր, վոր յես վերջ տայի...

— Գիտես, Հրայր, յերկար մտածելուց հետո ասաց հանկարծ Կարոն,— արի յետ դառնանք այդ սրիկայի մօտ, այս անգամ յես իմ անեղիւքը գիտեմ:

— Ի՞նչ գիտես:

— Նա հիմա ծիծաղում ե իւր մաքում ինձ վրա, չափազանց միամիտ, հիմար ե կարծում: Բայց յես նրան ցույց կտամ, վոր յես այնքան ել հիմար չեմ: Յես կաշխատեմ քավել իմ մեղքը: Հենց վոր տեսա, վոր մի քիչ կասկածելի մարդ ե, յես նրա հերը կանիծեմ և Չեկային կհանձնեմ:

Յերկու ընկերները վերադարձան իրենց թողած նստարանի մօտ: Սակայն անծանոթն այլևս այնտեղ չեր:

— Եհ, սիրելիս,— ասաց Հրայրը,— յես այդպես ել գիտեյի: Նա քեզ նման հիմար չե, վոր տեղեկութիւնները ստանալուց հետո կըրկին նստած մնար իւր տեղում, մինչև վոր դու գլխի կընկնելիւր ու կգայիր նրան բռնելու:

Կարոյի հուսահատութիւնը չափ չկար: Նամոռացել եր ամեն ինչ, գիտեր միայն, վոր մի աններելի, միանուղղելի քայլ եր կատարել: Նա պատրաստ եր որ ու գիշեր ընկնել անծանոթի յետևից, գտնել և իշխանութիւն ձեռքը մատնել նրան:

— Յեմ ո՞վ գիտե, չի ճարվի մի ուրիշը, ինձ պես հիմար, վորից այդ սրիկան կարող ե խոսք դուրս քաշել մեր Կարմիր բանակի մասին,— մտածում եր անհրճաւ Կարոն:

— Կաց, Հրայր,— հանկարծ ասաց Կարոն, բռնելով ընկերոջ թևից,— այսքան ժամանակում կայարանից գնացք չի գնացել. ուրեմն նա այստեղ պետք ե լինի, ուրիշ տեղ գնացած չի լինի:

— Կարծե՞ւմ ես, — կասկածելով հարցրեց
Հրայրը, — թեև մինչև գնացքի գալը դեռ ամբողջ
մի ժամ ունենա՞ք, յեկ փնտրենք:

— Հրեն, — հանկարծ կանչեց Կարոն չա-
փից դուրս ուրախացած:

Կայարանի յետևից գալիս եր մեր անծա-
նոթը: Նա տեսնելով Կարոյին ու Հրայրին, ժպտա-
լով մոտեցավ նրանց:

Կարոն անհամբերությունից քիչ եր մնում
ուտի իրեն:

— Ներեցեք, դուք մեզ չասացիք, թե ինք-
ներդ վորտեղից եք գալիս:

— Ռուսաստանից, — շատ հանգիստ շեշտով
և իր մշտական ժպտով պատասխանեց անծա-
նոթը:

— Աս... բայց գուցե և արտասահմանից,
— մտքումն ասաց Կարոն, — դա դեռ կստուգենք
մենք: Կաց հիմա ամեն ինչ կպարզվի:

— Իսկ ո՞ւր եք գնում:

— Գնում եմ ձեր գունդը:

— Մեր գնդից, ինչպե՞ս, ինչո՞ւ, — միաժա-
մանակ բացականչեցին Կարոն ու Հրայրը զար-
մանքով:

— Մոսկվայում նոր եյի ավարտել ուսումս
և նշանակվելով 2-րդ հրետգունդը քաղցեկ, ստա-
ցել եյի յերկու շաբաթվա արձակուրդ: Այժմ,
վերջացնելով արձակուրդս, վերադառնում եմ
պաշտոնատեղիս:

Հրայրն ու Կարոն չկարողացան զսպել ի-
րենց ծիծաղը:

— Յես լավ եմ հասկանում ձեր ծիծաղի
պատճառը: Ընկերն, իհարկե, ձեր խրատից հետո
յեկել եր ստուգելու իմ ու լինելը, այնպես չէ,
դիմեց նա Հրայրին:

— Այո:

— Ուշ եր, սիրելիս, — այս անգամ խոսքն
ուղղեց Կարոյին. — անկասկած ձեր տված տե-
ղեկությունները չափազանց կարևոր եյին, և յե-
թե յես լրտես լինեյի, դուք ինձ այլևս այստեղ
չեյիք գտնի: Յես հիշեցի հին պատմությունից
մի որինակ. հետախույզ զինվորը, գնալով թըշ-
նամու բանակը, ասաց. «Յեթե ինձ բռնեն, ին-
ձանից վռչինչ չեն իմանա», և կծեց իր լեզուն:

Լավ ե գրկվել լեզվից, քան թե ռազմա-
կան գաղտնիքը հայտնելով, դառնալ ընկերնե-
րի մատնիչն ու դահիճը:


Մենք ներկայումս շրջապատված ենք թշնամի-
ներով և պետք է մեր լեզուն մեզ քաշենք:

Ռազմական գաղտնիքը հաղթանակի գաղ-
տնիքն է:

— Իսկ ձեզ, ընկեր, — ասաց քաղցեկը Հրայ-
րին, կասե՞մ, վոր մյուս անգամ նման դեպքերում
պետք է ընկերոջ նկատմամբ ավելի կտրուկ մի-
ջոցների դիմել: Մինչև աչքով-ուներով հասկաց-
նելը շատարոս ընկերը բավական շատ բան կա-
սի, իսկ լրտեսին ասածն այլևս չես վերադար-
ձնի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բանդիաների ձեռքում 3
2. «Չարքերը» 8
3. Սիր, զաչեմ, է 13
4. Քեռու տղա 19
5. Հաղթանակի զաղտնիքը 24



ՀՀ Ազգային գրադարան



NL0332299

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.

25797/2

ԱՅ 1
այն